№ 100 Յունիսի 8 Երեքշաբթի 1882 Յունիսի 8 Երեքշաբթի № 100

ՏԱՍՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։ Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Ցայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Մեծ-Ղարաքիլիսայից։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Ֆրանսիա։ Իտալիա։ Նամակ Պարսկաստանից։—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։ — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ — ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Երկաթուղու սակագնի օրէնսդրական կողմը։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՄԵԾ-ՂԱՐԱՔԻԼԻՍԱՅԻՑ

Մայիսի 30-ին

Ապրիլի 30-ին տեղական անտառապետի և մեր հասարակութեան մէջ տեղի ունեցած խոշոր անկարգութեանց մասին գրվեցաւ «Մշակի» և «Մեղուի» մէջ։ «Кавказъ» ռուս լրագիրն էլ «Մշակից» քաղուած արեց, բայց թողնելով դլխաւոր կէտերը, որոնք աւելի լաւ էին պարզում անտառապետի մարդավարի վարմունքը երկրագործների հետ։ Բայց թէ «Кавказъ»-ը ինչու համար այդպէս վարվեց, այդ մեղ համար մընաց անբացատրելի հանելուկ։ Ապրիլի 30-ին պատահած անցքը ամեն տեսակ քունջ ու պուճախում խօսակցութեան առարկայ է դարձել։ Փամբակը, Լօռին, Ալէքսանդրապօլը..... բոլորն էլ այս հարցով են զբաղված, բոլորն էլ Ղարաքիլիսայի հասարակութեան վրա են ցաւում։ Ամենքի սրտի միակ ցանկութիւնն է, որ իսկական մեղաւորը լոյս աշխարհ դայ, իսկ անմեղները ազատվեն դառն չարչարանքներից։ Իսկապէս անտառապետն է մեղաւոր, թէ հասարակութիւնը,—այս հարցերի վճռական պատասխանը՝ իմ ուժից վեր է. անցքը մենք պատմենք երկու խօսքով, թող ընթերցողը եզրակացութիւն անէ։ Ամբողջ հասարակութիւնը զոռում է թէ «մենք մեր սեփական հողերը վարում էինք, անտառապետը մեր ճանապարհը կտրել, անցկենդին սաստիկ թակել, արօրները կտրատել, գործիքները խլել, ձիու պոչից կապել, քաշ տուել և այլն։ Իսկ անտառապետը այդ գործերը կատարելուց յետոյ, ամենայն ճարպիկութեամբ գնում է դիւղ և բողոքում է թէ. «Ղարաքիլիսեցիք առաջուց նախապատրաստված գնացել են դաշտը և յատուկ նպատակ են ունեցել իրան սպանելու»։ Հէնց այս կէտի համար էլ ղարաքիլիսեցիք բանտարկվեցան։ Ո՞վքեր են անտառապետի վկաները։ Գլխաւորապէս իր օրիժէյիկները, որոնք, դիւղացիներին ծեծելիս, օգնել են անտառապետին։ Արդեօք նրանք եթէ որ և իցէ կախում չունենային անտառապետից, դարձեալ յօգուտ անտառապետի ցուցումներ կը տային։ Այս էլ հարց է։ Բայց ասացէք, խնդրեմ, պատուելի ընթերցողներ, օրը ցերեկով, բաց օդի մէջ, ահագին բազմութեան առաջ, կարելի է մարդ սպանել, այն էլ մի ահագին անտառապետին։ Միթէ ղարաքիլիսեցիների համար մարդասպանութիւնը մի չատ հասարակ բան է, միթէ մարդու գլուխը մի սոխի գլուխ է։ Այդպիսի հրապարակական ձեով մի հաւ անդամ չէ կարելի սպանել։ Ամենաարիւնարբու աւազակ վայրենիներն էլ հրապարակաւ այդպիսի խոշոր մարդասպանութիւն չեն յանդգնի անել, ուր մնաց ղարաքիլիսեցիք, որ թէ զարդացմամբ և թէ բարոյականութեամբ փամբակի, Լօռու մէջ առաջին տեղն են բռնում։ Եթէ հասարակութիւնը այդպիսի մի վայրենի բարբարոսութիւն գործելու հնարաւորություն տվեր առաջուց», միթէ ուրիշ յարմար ճանապարհ չը կար։ Եւ ով է այն մարդը, որ հասարակութեան այդ գաղտնի նախապատրաստութեան հետ ծանօթ էր։ Ատուծուն էլ, անտառապետին էլ և ամեն մի արդար խիղճ ունեցողին էլ շատ լաւ յայտնի է, որ միամիտ և ուխարից երկչոտ, օրէնքի առջև զղացող երկրագործները երբէք չէին վստահանայ այդպիսի մի եղեռնագործութեան միտք երևակայել անդամ, թող թէ իրագործել և այն հրապարակաւ։—Ղարաքիլիսեցի բանտարկվածները Ալէքսանդրապօլի բանտում ողբում են իրանց սև օրը։ Մինչև հիմայ հասարակութեան բողոքը, ծեծվող երկրագործների գանգատը, բանտարկվածների հառաչանքը դեռ քննութեան դարձի մէջ չեն մտել. մինչև հիմայ դեռ անտառապետին և նրա վկաներին են խօսեցնում։ Բայց թէ երբ ուշադրութիւն կը դարձնեն հասարակութեան վրա, այդ ճիշդ չը գիտենք։ Միայն հաւատացած ենք որ մի օր էլ սրանց վրա ուշք կը դարձնեն և այդպիսով երկու կողմի դանգատները խորին հեռատեսութեամբ չափելով և ձեւելով, արդարութիւնը երևան կը հանէ։—Որ բոպէին կուզես, մտիր մեր բանտարկվածների տունը և տես թէ դրանց դերդաստանը ինչպիսի սուդ է անում և ազիողորմ ձայնով քեզանից «մի դրուստ խաբար ուղում իրանց անուշ բալէքանց» համար։ Մեղադրել չէ կարելի. գարունը անցաւ, մտնում ենք ամառը. երկրագործի աշխատութեան ամենալաւ ժամանակն է։ Նա այժմ պէտք է անդադար աշխատի, որ ձմեռվայ համար ապրուստի պաշար ունենայ։ Բայց ցաւալի է ասել, որ աշխատութեան օրերը իրար ետևից անցնում են, իսկ մեր երկրագործները, ձեռքերը ծոցը, Ալէքսանդրապօլի բանտում, մռայլ կերպարանքով լուսամուտի առաջ նստած չուտ չուտ «ախ» են հառաչում և ամեն րոպէ սպասում են թէ մինը մօտենայ և այս ուտտաբեր խօսքերը ասէ. «ազատ էք, գնացէք ձեր գործին։» Այդ թշուառների մէկի դուքանն է կողոպտեցել, երկրորդի տունը բոլորովին անտէր և մի բուռ ալիւր չը կայ, երրորդի այգու մշակութիւնը մնաց և այլն...։—Ամբողջ հասարակութեան միակ ցանկութիւնն է որ բանտարկվածներին ամենածանր գրաւականով արձակեն գնան իրանց ապրուստի պատրաստութիւն տեսնեն, մինչև դատաստանը գործը կը պարզէ, եթէ մեղաւոր դուրս եկան, թող գնան նշանակեալ պատիժը կրեն։—Այսօր բոլոր գիւղացիք խօսում էին, որ ուրիշ քննիչ է գալիս գործերը նորից քննելու։ Բայց թէ տեղական քննիչը ինչու է հրաժարվում այդ քննութիւնից, այդ մասին որոշ ոչինչ յայտնի չէ։—Այս բոպէիս այս ընդարձակ բեմի վրա կանգնած են ղարաքիլիսեցիք, անտառապետը և երկուսի մէջ տեղը անաչառ դատաստանը։ Իսկ բազմաթիւ ժողովուրդ խորին յուսահատութեամբ հանդիսատես է այս ներկայացման։ Մեծայոյս ենք, որ արդար դատաստանը ամենայն անկողմնապահութեամբ կը քրքրէ երկու կողմի գանգատները և ամեն բան կը պարզէ։

Այսօր անտառային գլխաւոր կառավարութեանը հասարակութեան կողմից մի խնդիր գնաց։ Մօտ կայում յուզվել է և ենթարկվել բազմակողմանի կշռադատութեանց, բայց միայն այս վերջին երկու երեք տարիներումն է, որ սկսել է սա ոտը դնել գործադրական հողի վրա. այնքան բազմատեսակ էին այն խոչընդոտները, որոնց պատճառում էին տէրութիւնները, երբ խնդիրը գալիս էր՝ այս ընթացքում ստացած՝ հետևանքները իրականացնելու։ Ռուսաստանի արտաքոյ սահմանի տէրութեանց համար այս խոչընդոտները ստեղծում էին երկաթուղիների ընկերութիւնները, որոնց ներկայացուցիչները մեծ քանակութեամբ նստած էին լինում ընտրողական ժողովներում և հարցին տալիս էին այն ուղղութիւնը, որը իրանց շահերին պիտի ծառայէր։ Սրանք այստեղ ունէին իրանց ծառայողների բազմաթիւ նպաստաւոր քուէները, սրանք օգուտ էին քաղում իրանց դրամական միջոցներից, ունէին ձեռքի տակ՝ աւելի քան որչափ հարկաւոր էր՝ այն կալուածատիրական իրաւասութիւնները, որով վաւերանում են ընտրողական քուէները։ Այսպիսի ոյժով զօրաւոր չէր յաղթանակի դալնայ պսակները ստանալ....

Ուշադրութեան արժանի են այս մաքառմանց հետևանքները որ մենք անմիջապէս առաջ կը բերենք այստեղ։ Ֆրանսիայի տէրութիւնը վերջ ի վերջոյ գնում է մի քանի երկաթուղիների գծեր, հիմնում է ճանապարհային հաղորդակցութեան բարձրագոյն խորհրդարան, որի նստերում սկսում են մասնակցել և վաճառականութեան ներկայացուցիչները։ Այս խորհուրդը արտայայտել է մի քանի դատողութիւններ և այդ դատմանց վրա է հիմնում տէրութիւնը իր յարաբերութիւնները մասնաւոր երկաթուղու ընկերութեանց հետ։ Այսպէս մենք տեսնում ենք, որ այս խորհրդում վաճառականութեան ձայնը իր պատշաճ տեղն է ստանում։ Նշանագծելու է այն հանգամանքը ևս, որ Ֆրանսիան հասնում է այն եզրակացութեան թէ՝ երկաթուղիքը պիտի տէրութեան սեպհականութիւն լինեն և ոչ մասնաւոր ընկերութեանց։

Աւելի որոշեալ կերպարանք է ստանում սակագնի այս խնդիրը Գերմանիայում։ Այս տէրութիւնը 1880 թվին ձեռնամուխ է լինում այս խնդրի զանազան կողմերին. պարզացնում է և միայնակցում սակագինը և գլխաւորապէս—զրկում է երկաթուղիների ընկերութիւններին այն արտօնութիւններից, որոնցով նրանք ինքնակամ փոփոխում էին սակագինը։ Բայց այդմանէ, նա սկսում է սակաւ առ սակաւ սեփականացնել իրան մասնաւոր երկաթուղիները։ Գերմանիայի պետական անձինք հասնում են այն եզրակացութեան թէ՝ XIX դարում չէ կարելի թոյլ տալ երկաթուղիների ընկերութեանցը խաղալ մի ինչ նախանամութեան դեր ժողովրդային այնպիսի ֆակտորների վերաբերութեամբ, որպիսի են աղգային արդիւնաբերութիւնները և կիրառութիւնը։ Չէ կարելի ապասան առնել նրանց կամքին, որ նրանք՝ ըստ հաճոյից՝ զարդացնեն տէրութեան տարածութեան մի կէտում մի ինչ աննշան շահեստը, ճնշել—մինչև անդամ կարողանալ արմատախիլ անել—մի ուրիշ շահեստը, որը գուցէ ամենահրաժեշտ է, ամենաօգտակար է և որը դոյութիւն է ստացել բնական ճանապարհներով։ Սակագնի պարտ ու պատշաճ շարժմամբ շատ դիւրին է այդ կատարել... Երբ որ բեռնակրութեան ծախքերի պատճառով թանգանում է մի որ և է մթերքի գինը, այն ժամանակ միայն նա կարող է շահով ծախվել, երբ սակագնի քաղաքականութիւնը իր երերումներով պատճառ չէ լինում տնտեսական հաւասարակշռութիւնը խանդարելու։ Այս պատճառով Գերմանիայում նոր կարգաւորեալ սակագինը պիտի համաձայնի հետևեալ ընդհանուր խնդիրներին։

Սակագինը այն աստիճան պարզ պիտի լինի, որ ամենայն ոք հեշտութեամբ կարողանայ ինքը հաշվել իր ապրանքի բեռնակրութեան ծախքերը։

Սակագինը չը պիտի երբէք դժուարակիր լինի մանր արդիւնաբերողների համար, որք միանդամայն ճնշված էին նրա անցեալ դրութիւնից, և ինչպէս հետևանք այս հիմունքին՝

Սակագինը պիտի որ միապէս իրաւացի լինի երկրի ամեն արդիւնաբերողների վերաբերմամբ։ Սակագինը ինչքան որ կարելի է թեթև պիտի լինի։

Ցոյց տալու համար գործի միւս երեսն էլ, առաջ ենք բերում մի ոչ մեծ հատուած, որից ընթերցողը կը տեսնի, որ Գերմանիայում սակագինը ինչքան է հեռացել այդ խնդրի տեսական դիտութիւնից։ Ահա այդ հատուածը. «Այդ չափազանց պէտք է անդադար աշխատի, որ ձմեռվայ համար ապրուստի պաշար ունենայ։ Բայց ցաւալի է ասել, որ աշխատութեան օրերը իրար ետևից անցնում են, իսկ մեր երկրագործները, ձեռքերը ծոցը, Ալէքսանդրապօլի բանտում, մռայլ կերպարանքով լուսամուտի առաջ նստած չուտ չուտ «ախ» են հառաչում և ամեն բոպէ սպասում են թէ մինը մօտենայ և այս ուտտաբեր խօսքերը ասէ. «ազատ էք, գնացէք ձեր գործին։» Այդ թշուառների մէկի դուքանն է կողոպտեցել, երկրորդի տունը բոլորովին անտէր և մի բուռ ալիւր չը կայ, երրորդի այգու մշակութիւնը մնաց և այլն...։—Ամբողջ հասարակութեան միակ ցանկութիւնն է որ բանտարկվածներին ամենածանր գրաւականով արձակեն գնան իրանց ապրուստի պատրաստութիւն տեսնեն, մինչև դատաստանը գործը կը պարզէ, եթէ մեղաւոր դուրս եկան, թող գնան նշանակեալ պատիժը կրեն։—Այսօր բոլոր գիւղացիք խօսում էին, որ ուրիշ քննիչ է գալիս գործերը նորից քննելու։ Բայց թէ տեղական քննիչը ինչու է հրաժարվում այդ քննութիւնից, այդ մասին որոշ ոչինչ յայտնի չէ։—Այս բոպէիս այս ընդարձակ բեմի վրա կանգնած են ղարաքիլիսեցիք, անտառապետը և երկուսի մէջ տեղը անաչառ դատաստանը։ Իսկ բազմաթիւ ժողովուրդ խորին յուսահատութեամբ հանդիսատես է այս ներկայացման։ Մեծայոյս ենք, որ արդար դատաստանը ամենայն անկողմնապահութեամբ կը քրքրէ երկու կողմի գանգատները և ամեն բան կը պարզէ։

Այսօր անտառային գլխաւոր կառավարութեանը հասարակութեան կողմից մի խնդիր գնաց։ Մօտ կայում յուզվել է և ենթարկվել բազմակողմանի կշռադատութեանց, բայց միայն այս վերջին երկու երեք տարիներումն է, որ սկսել է սա ոտը դնել գործադրական հողի վրա. այնքան բազմատեսակ էին այն խոչընդոտները, որոնց պատճառում էին տէրութիւնները, երբ խնդիրը գալիս էր՝ այս ընթացքում ստացած՝ հետևանքները իրականացնելու։ Ռուսաստանի արտաքոյ սահմանի տէրութեանց համար այս խոչընդոտները ստեղծում էին երկաթուղիների ընկերութիւնները, որոնց ներկայացուցիչները մեծ քանակութեամբ նստած էին լինում ընտրողական ժողովներում և հարցին տալիս էին այն ուղղութիւնը, որը իրանց շահերին պիտի ծառայէր։ Սրանք այստեղ ունէին իրանց ծառայողների բազմաթիւ նպաստաւոր քուէները, սրանք օգուտ էին քաղում իրանց դրամական միջոցներից, ունէին ձեռքի տակ՝ աւելի քան որչափ հարկաւոր էր՝ այն կալուածատիրական իրաւասութիւնները, որով վաւերանում են ընտրողական քուէները։ Այսպիսի ոյժով զօրաւոր չէր յաղթանակի դալնայ պսակները ստանալ....

Ուշադրութեան արժանի են այս մաքառմանց հետևանքները որ մենք անմիջապէս առաջ կը բերենք այստեղ։ Ֆրանսիայի տէրութիւնը վերջ ի վերջոյ գնում է մի քանի երկաթուղիների գծեր, հիմնում է ճանապարհային հաղորդակցութեան բարձրագոյն խորհրդարան, որի նստերում սկսում են մասնակցել և վաճառականութեան ներկայացուցիչները։ Այս խորհուրդը արտայայտել է մի քանի դատողութիւններ և այդ դատմանց վրա է հիմնում տէրութիւնը իր յարաբերութիւնները մասնաւոր երկաթուղու ընկերութեանց հետ։ Այսպէս մենք տեսնում ենք, որ այս խորհրդում վաճառականութեան ձայնը իր պատշաճ տեղն է ստանում։ Նշանագծելու է այն հանգամանքը ևս, որ Ֆրանսիան հասնում է այն եզրակացութեան թէ՝ երկաթուղիքը պիտի տէրութեան սեպհականութիւն լինեն և ոչ մասնաւոր ընկերութեանց։

Աւելի որոշեալ կերպարանք է ստանում սակագնի այս խնդիրը Գերմանիայում։ Այս տէրութիւնը 1880 թվին ձեռնամուխ է լինում այս խնդրի զանազան կողմերին. պարզացնում է և միայնակցում սակագինը և գլխաւորապէս—զրկում է երկաթուղիների ընկերութիւններին այն արտօնութիւններից, որոնցով նրանք ինքնակամ փոփոխում էին սակագինը։ Բայց այդմանէ, նա սկսում է սակաւ առ սակաւ սեփականացնել իրան մասնաւոր երկաթուղիները։ Գերմանիայի պետական անձինք հասնում են այն եզրակացութեան թէ՝ XIX դարում չէ կարելի թոյլ տալ երկաթուղիների ընկերութեանցը խաղալ մի ինչ նախանամութեան դեր ժողովրդային այնպիսի ֆակտորների վերաբերութեամբ, որպիսի են աղգային արդիւնաբերութիւնները և կիրառութիւնը։ Չէ կարելի ապասան առնել նրանց կամքին, որ նրանք՝ ըստ հաճոյից՝ զարդացնեն տէրութեան տարածութեան մի կէտում մի ինչ աննշան շահեստը, ճնշել—մինչև անդամ կարողանալ արմատախիլ անել—մի ուրիշ շահեստը, որը գուցէ ամենահրաժեշտ է, ամենաօգտակար է և որը դոյութիւն է ստացել բնական ճանապարհներով։ Սակագնի պարտ ու պատշաճ շարժմամբ շատ դիւրին է այդ կատարել... Երբ որ բեռնակրութեան ծախքերի պատճառով թանգանում է մի որ և է մթերքի գինը, այն ժամանակ միայն նա կարող է շահով ծախվել, երբ սակագնի քաղաքականութիւնը իր երերումներով պատճառ չէ լինում տնտեսական հաւասարակշռութիւնը խանդարելու։ Այս պատճառով Գերմանիայում նոր կարգաւորեալ սակագինը պիտի համաձայնի հետևեալ ընդհանուր խնդիրներին։

Սակագինը այն աստիճան պարզ պիտի լինի, որ ամենայն ոք հեշտութեամբ կարողանայ ինքը հաշվել իր ապրանքի բեռնակրութեան ծախքերը։

Սակագինը չը պիտի երբէք դժուարակիր լինի մանր արդիւնաբերողների համար, որք միանդամայն ճնշված էին նրա անցեալ դրութիւնից, և ինչպէս հետևանք այս հիմունքին՝

Սակագինը պիտի որ միապէս իրաւացի լինի երկրի ամեն արդիւնաբերողների վերաբերմամբ։ Սակագինը ինչքան որ կարելի է թեթև պիտի լինի։

Ցոյց տալու համար գործի միւս երեսն էլ, առաջ ենք բերում մի ոչ մեծ հատուած, որից ընթերցողը կը տեսնի, որ Գերմանիայում սակագինը ինչքան է հեռացել այդ խնդրի տեսական դիտութիւնից։ Ահա այդ հատուածը. «Այդ չափազանց

ձգտողութիւնները առ այն իդէալական դրութիւնը, յորում միջոցի ամենայն ոք կարողանար իր մատերով հաշվել բեռնակրութեան դինը. օրինակ՝ դրասմներուն ուտեցնելու աղի մի ցենտներ բեռնակրութեան գինը Կ. Պոլսից մինչև Փարիզ, կամ մէկ պուդ կաշու բեռնակրութեան ծախքը—Ս. Պետերբուրգից մինչև Մարսել, և ընդ նմին տիրէր աշխարհում լիակատար արդարութիւնը ամեն մէկ բեռնակրութեան համար,—այսպիսի ձգտողութիւնները, ասում ենք,—ուշադրութիւն չէ դարձնում որ չը կայ աւելի մեծ անիրաւութիւն, քան այդ արդարութիւնը, և առհասարակ այդ ձգտողութիւնը ուշադրութիւն չէ դարձնում, որ այդպիսի ցանկութիւնները միանդամայն անգործադրելի պիտի մնան։ Ճշմարիտ է, որ երկաթուղիների սակագները մեծ քաւոս են ներկայացնում, որտեղ անխափան և անսանձ տիրում է գաղանիքը, զուշաքաղութիւնը և այլ աղտեղի շարժառիթները, առաւելապէս նաև՝ տրամաբանութեան բացակայութիւնը։ Բայց և այնպէս, չէ կարելի չը խոստովանել, որ սակագների բարեկարգաւորելու, կազմակերպելու և դասաւորելու ամեն ինչ փորձերը այս ընթացքում քաւոսը աւելի չը փոթում էին, քան թէ խնդիրը պարզում։ Եւ այդ քաւոսը տեղի ունի ոչ թէ այն պատճառով, ինչպէս մասամբ և իրաւացի պնդում են երկաթուղու քաղաքականութեան յոռադատները թէ՝ սակագնի անպարզութիւնը ոչ պակաս չահարար է երկաթուղու կառավարութեանը, այլ իսկ և իսկ այն պատճառով է, որ երկաթուղու սահագինը չէ կարելի այնպէս կարգաւորել, որպէս հացի և մսի տակսան է։ Երկաթուղին, լինի սա տէրութեանը կամ մասնաւոր սեփականութիւն, ոչ այլ ինչ է, բայց եթէ վաճառական մի գործ, ընդ որում պահանջը և առաջարկութիւնը, կիրառական և չահեստի յատուկ արժէքները խաղում են նոյն իսկ դերը, ինչ որ ունեն նրանք այլ առևտրական գործերում։ Բեռնակրութեան իր յատուկ ծախքերը զանազան տեղերում զանազան են, որպէս և կիրառական մթերքների գները, բեռնակրութեան պահանջը և առաջարկութիւնը, այս պատճառով, ի նկատ առնելով այս թանկագնութեանց յաճախ փոփոխութիւնները, ամենայն ինչ տրամաբանական և իրաւացի սակագնի կարդաղ-

տիկ ապագան ցոյց կը տայ թէ այդ կառավարութիւնը ինչպէս կը վերաբերվի դէպի ժողովրդի բողոքը: Սպասենք, համբերենք, դիմանանք... մինչև ամեն բան պարզվի:—Ղարաքիլիսի հասարակութեան քաղցր ուշադրութիւնը անհրաժեշտ է դարձնել և այն տխուր հանգամանքի վրա, որ այդ բանտարկվածների անխնամ և չքաւոր դերդաստանին պէտք է ամեն կերպով մխիթարել մինչև նրանց պահպանող ձեռքերը կազատվեն բանտարկութիւնից և կը սկսեն խնամել իրանց դերդաստանը: Ամենքին էլ յայտնի է, որ այդ բանտարկվածների մէջ կան այնպիսի մարդիկ, որոնց ընտանիքը, հաղիւ իր օրական ապրուստն է ճարում: Բայց վայ այդպիսի ապրուստին...:

***

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Կոմս Լօրիս-Մէլիքօվ Ս. Պետերբուրգ թողնելուց առաջ մայիսի 29-ին ներկայացաւ Նորին Մեծութեան թագաւոր Կայսրին: Կոմս Միլիւտին նոյնպէս թողեց Ս. Պետերբուրգ և ուղևորվեց դէպի արտասահման:

—

Շնորհակալութեամբ ստացանք մի նոր դուրս եկած վրացերէն գիրքը «Մօտիրօբանի» վերնագրով: Գիրքը պարունակում է իր մէջ երեք վէպեր, մինը Կարապետի, միւսը Վալտէր-Սկօտի և երրորդը Ռիդի: Թարգմանողներն են վրաց կանայք. Ե. Լօրակիպանիձէ, Ա. Թումանօվա և Ե. Գաբաեվա: Գիրքը տպված է Թիֆլիսում, ներկայ 1882 թվին, Մէլիքօվի տպարանում և արժէ 40 կոպէկ:

—

Շնորհակալութեամբ ստացանք պ. Ե. Լալայեանցի թարգմանած «Վարդագոյն ամպ» մանկական վէպը, հեղինակութիւն Ժորժ Սանդի: Տպված է Թիֆլիսում, Յովհ. Մարտիրոսեանցի տպարանում ներկայ 1882 թվին: Գինը 25 կոպէկ է:

—

Ստացանք ԿԱՐԱԿՈՒՐՏԻՑ բժիշկ Միրիմանեանից 5 ռուբլ սպանված եօթ հոգի մշակների որբացած ընտանիքների օգտին: Անցեալ 78 ռուբ. գումարի հետ կանի 83 ռուբլ: Մեղանից էլ ավելացնելով 17 ռուբլ, գոյացաւ ուղիղ 100 ռուբլ, որ և յանձնեցինք կիրակի օրը յիշեալ մշակների ազգականներին: Ուրեմն մինչև այժմ սպանված մշակների ազգականները «Մշակի» խմբագրութիւնից ստացան 200 ռուբլ: Բացի այդ օգնութիւնից նրանք միայն 100 ռուբլ ստացան ուրիշ տեղից: Զէնք հասկանում. նրանք որոնք փողերը հաւաքել են, էլ որ օրվայ համար են պահում, քանի որ սպանվածների թշուառ ազգականները հիմա են կարօտ օգնութեան:

—

«Тифл. Объявленія» լրագիրը լսել է որ ԹԻՖԼԻՍԻ թատրօնի նոր անտրեպրենեօր պ. Յ. Փիթօևվ այս օրերս վերադարձել է Թիֆլիս: Որքան յայտնի է լրագրին պ. Փիթօևվ արդէն հրաւիրել է ռուսաց օպէրայի համար երգիչներ և երգչուհիներ: Ներկայ ամսի երկրորդ կէսում կը սկսվի թատրօնի վերաշինութիւնը:

—

ԴԻԼԻՋԱՆԻ քահանան հայր Յարութիւն Տէր-Գէորգեան խնդրում է մեզ տպել մի հերքում «Մշակի» 93 համարում տպված Վաղարշապատից գրած նամակի մի քանի կէտերի, որոնք վերաբերում են Դիլիջանին: Այդ գիւղի հայ բնակիչները, բացի մի 15 տուն ժողովրդից, շատ աղքատ են: Եթէ Դիլիջանի եկեղեցին թողած է, ասում է տէր-հայրը, դրա պատճառն այն է, որ եկեղեցու յատակը աւազոտ է. եթէ այսօր մաքրեցիք եկեղեցու իրեղէնները, վաղը կը տեսնէք դարձեալ թոզով ծածկված: Արդէն ձեռնարկած է այդ աղքատ եկեղեցու սալայատակելու գործը: Յօդուածագիրը զարմանում է թէ Վաղարշապատի նամակագիրը Դիլիջանի քահանային տգէտ է ասում, այն ինչ նա չէ էլ ծանօթացել, չէ էլ խօսել տէր-հօր հետ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱ

—

Փարիզից „Köln. Zeitg." լրագրին գրում են յունիսի 3-ից: Այսօր առաւօտ Ֆրէյսինէ հաղորդեց մինիստրների խորհրդին, որ եւրօպական պետութիւնները դրական պատասխաններ տուին կ. Պօլսի կոնֆերենցիայի մասին: Միայն Թիւրքաց կառավարութենից համաձայնութիւն չէ ստացված: Կոնֆերենցիայի ժամանակ կը քննվեն հեռաւոր հարցերը. սուլթանի պետական իրաւունքների պահպանելը, խեդիվի իրաւունքները և միջազգային պարտականութիւնները: Պէտք է պահպանվեն Եգիպտոսին տուած արտօնութիւնները և եգիպտական պետական հիմնարկութիւնները պէտք է զգուշութեամբ զարգանան: Այնուհետև մինիստրների խորհուրդը քննեց յունիսի 2-ին պատգամաւորների ժողովի մէջ եղած վիճաբանութիւնները: Ֆրէյսինէ յայտնեց, որ, եթէ Գամբետտա նորից կը սկսի նրա դէմ մաքառելը, նա ստիպված կը լինի հրապարակական նիստի ժամանակ կարդալ Գամբետտայից և Շալմել-Լակուրից ստորագրած գօկումենտներ, որոնք ապացուցանում են, որ, եթէ Գամբետտայի մինիստրութիւնը պահպանվէր, Ֆրանսիային պատերազմ էր սպառնում, նա առանձնացած կը լինէր եւրօպական պետութիւններից, որոնք Ֆրանսիայի դէմ համաձայնութիւն կը կազմէին:

Եգիպտական գործերի մասին եւրօպական կոնֆերենցիայի նախագծի վերաբերութեամբ „Polit. Corresp." լրագիրը հաղորդում է. վերջին ժամանակներում պետութիւնների մէջ կատարված բանակցութիւններից երևում է, որ նրանք ամենքն էլ սկզբունքով համաձայն են կոնֆերենցիա գումարելու մասին առաջարկութիւնը ընդունել: Ֆրանսիական կառավարութեան այդ առաջարկութիւնը պաշտօնապէս յայտնվեցաւ թէ եւրօպական պետութիւններին և թէ Բ. Դրանը միայն յունիսի 3-ին: Թիւրքաց կառավարութիւնը դեռ ևս չէ ընդունել առաջարկութիւնը և այդ գործը կախված է ապագայ բանակցութիւններից: Քաղաքական շրջանները այն կարծիքի են, որ երբ պետութիւնների մէջ համաձայնութիւն կը կայանայ բանակցութիւնների հիմունքների մասին, եւրօպական համաձայնութիւնը կը ստիպէ Բ. Դրանն էլ ընդունել կոնֆերենցիայի նախագիծը: Նոյն շրջանների կարծիքով, եգիպտական գործերի ընթացքը չափազանց վտանգաւոր է, որովհետև շատ կարելի է, որ մինչև բանակցութիւններ կը կատարվեն Եգիպտոսի մէջ statu quo պահպանելու մասին, այնտեղ այնպիսի անցքեր կը պատահեն, որ հարկաւոր կը լինի վերականգնել այդ դրութիւնը և ոչ թէ պահպանել նրան:

Ինչպէս յայտնի է, ֆրանսիական պատգամաւորների ժողովը յունիսի 3-ին վճռեց յարգել հանգուցեալ Գարիբալդիի յիշատակը, դադարեցնելով ժողովի նիստերը: Այդ վճռից առաջ ազգակալ վիճաբանութիւններ կատարվեցան: Դեռ նիստի սկսվելուց առաջ լուր տարածվեցաւ, որ արմատական կուսակցութիւնը մտադիր է առաջարկել Գարիբալդիի յիշատակը յարգելու համար փակել պատգամաւորների ժողովի նիստը: Այդ պատճառով պահպանողական կուսակցութիւնը դեռ նիստի սկսվելուց առաջ չափազանց զրգռված էր: Հէնց որ նիստը բացվեցաւ, պատգամաւոր Բարիլիօնէ ուղևորվեցաւ դէպի ամբիօնը: Պատգամաւորները նրան շրջապատեցին. մի քանիսը աշխատում էին նրան յետ պահել, միւսները խրախուսում էին: Նրանցից ազատվելով, Բարիլիօնէ ասեց. „Իտալիան կորցրեց երևելի քաղաքացուն և մեծ հայրենասիրը, a priori, դառնում է Դանտիզեան զրաղանք:» (M. M. Freiherr von Weber. Nationalität und Eisenbahn—Politik).

Ահա մի ուրիշ ևս հեղինակ, Ադամս, իր տեսութեան մէջ Բրիտանական Տէրութեան միջամուխ լինելու վրա երկաթուղու գործերի մէջ, ասում է. «երկաթուղիների համար մատնաւոր օրէնսդրութիւնները ոչ ուրեք դեռ այնքան յամառութեամբ չէին յարմարացրած, որպէս Անգլիայում, բայց այնու ամենայնիւ այս սիստեմայի թերութիւնը այստեղ լիակատար եղաւ. վաճառականութեան յարատև փոփոխական պահանջմունքները ի դերև հանեցին նրա ակնկալեալ հետևանքները...» Մի ուրիշ տեղ իր երկասիրութիւնում նա աւելցնում է. «Անգլիայում երեսուն և հինգ տարվայ փորձառութիւնը այն է լինում, որ Պարլիմենտը վերջի վերջոյ համոզվում է թէ՝ ամենայն ինչ պարտաւորիչ կանոնադրութիւնը և մասնաւոր օրէնսդրութիւնները, չը նայելով որ այս օրէնքների լոյս ածելու ժամանակ նրանք շատ կարելի է որ համապատասխանում էին ժամանակի պահանջներին, բայց երբ որ փոխվում են հանգամանքները այս օրէնսդրութիւնների անկատարութիւնը խակոյն ակներև է լինում...»

Մենք չենք ուզում ծանրացնել մեր յօդուածը, ծաղկաքաղելով այլ և այլ հեղինակներից նոյն իսկ մտքերը սակագնի երերմանց մասին, կասենք միայն որ զը-լա-Գուբնների, Դորիչ, Լեր, Ֆինկա, ինչպէս նաև՝ վերը առաջ բերած՝ հատուածների հեղինակները համաձայն են միմեանց հետ այդ կէտի նկատմամբ, և այսպիսի resumé կարելի է հանել նրանց ասածներից. մթերքների թանկագնութիւնը փոփոխական տարր է, այսու և երկաթուղիների սակագները չեն կարող և չը պիտի անփոփոխ մնան, որովհետև մթերքների գնները բարձրանալուց երկաթուղիքը կարող են իրանց շահի մի մասը կորցնել և այդ մասը անպատճառ կանցնի ուրիշ միջնորդների ձեռքը, իսկ գների իջնելու ժամանակ՝ նրանք կը զրկվեն բեռների մի մասից: Այս միտքը ինքն ըստ ինքեան ուղիղ է և ոչինչ ասել չէ կարելի մինչև որ սակագնի երերումն կախված է մթերքների թանկագնութեանց փոփոխութիւններից, այս կամ այն շուկայի պահանջից և առաջարկութիւնից... Բայց խնդիրը միանգամայն փոխվում է, երբ սակագինը իր երերումներով ճնշում է շուկայի պահանջը և առաջարկութիւնը մի որ և է մթերքի վերաբերմամբ, և սակագնի երերմանց դէմ բողոքողները միայն նրա այս յոռի քաղաքականութիւնը ունեն ի նկատի: Զը մոռանանք. երկաթուղիքը կառուցվում են ոչ թէ մի որ և է վերացական նպատակներով, այլ ժողովրդի կարիքներին բաւարար լինելու, առևտրական շրջաբերութիւնները դիւրացնելու և երկրի արդիւնաբերական ոյժերը զարգացնելու համար, այս պատճառաւ վաճառաշահութեան գլխաւոր սկզբունքները, որք կենսական ոյժ են տալի երկրի ընդհանուր տնտեսութեանը, նաև՝ երկաթուղիներին, առաջին տեղը պիտի բռնեն, երբ երկու կողմի (երկաթուղու ընկերութեան և ժողովրդեան) շահերը ընդհարվում են միմեանց հետ: Ուզում ենք ասել թէ՝ երկաթուղին չինված է վաճառականութեան և շահեստից համար և ոչ ընդհակառակն...

Մինչև օրս Ամերիկայի երկաթուղիների ընկերութիւնները բոլորովին աղատ են սակագինը նշանակելու նկատմամբ, և, ինչպէս իրողութիւնները ցոյց են տալի, նրանք չափից դուրս չարաչար գործ են դնում իրանց արտօնութիւնները: Այս է պատճառ, որ վերջին ժամանակներում բեռնատէրերի բողոքը աճում է ու զարգանում մինչև բաց որոշ կազմակերպեալ յուզման աստիճանը: Տէրութիւնը ձգտում է սանձելու ընկերութեանց կամածին հաճոյքները, բայց մինչև այժմ նրա ամենայն ինչ ձգտողութիւնք մի որ և է չօշափելի հետանք չէ ունեցել: Այստեղ մենք տեսնում ենք, որ սակագինը չափ ու սահման չը գիտէ. երկաթուղին՝ երկաթուղու, կամ առաւել ևս՝ ջրային ճանապարհների հետ մրցելու ժամանակ սակագինը վար է ընկնում մինչև 0,24—0,30 ցենտ մէկ տոննա—միլի վրա, այսինքն՝ եթէ փոխադրենք մեր մետալական բուբլուն կը ստանանք համապատասխանող թուանշաններ $^1/_{312}$—$^1/_{238}$ կոպ. մէկ պուդ ու վերստի բեռնակրութեան վարձը: Միւս կողմից, այն երկաթուղու ճիւղերը, որք մրցողներ չունեն, սակագինը այնքան բարձր են պահում, որ—կարելի է ասել—միանգամայն ճնշում են իրանց պարագծի արդիւնաբերողներին և անցնում են ամենայն երկիրների սակագների maximum,—մի խօսքով՝ կրում են բոլորովին անսանձ մենավաճառական բնաւորութիւն: Մենավաճառութիւնը տնտեսական կեանքի ամեն մի ճիւղում վնասաբեր հանգամանք է ժողովրդային շահերի համար, բայց նա անչափ վնասակար է երկաթուղու քաղաքականութիւնում, որովհետև ամենայն տեսակ արդիւնաբերութիւնները գործ ունեն երկաթուղու հետ, և անշուշտ պիտի կրեն անմիջապէս նրա ծանր դրումը: Ամերիկայի երկաթուղիների պատմութիւնը հետաքրքիր է այն նկատմամբ ևս, որ այդպիսի լայն արտօնութիւնները մեծ օգուտներ չեն բերում ոչ նրանց ընկերութեանցը և ոչ ժողովրդային տնտեսութեանը: Ժողովուրդը բողոքում է երկաթուղու ընկերութեանց դէմ, իսկ այս վերջինները օրից օր տասնեակներով են կոտր ընկնում, և աներկբայ այսպիսի մանկութիւնները չեն կարող լաւ ազդեցութիւն ունենալ ոչ երկրի վաճառականութեան և ոչ արդիւնաբերութեան վրա: Այս երկաթուղիների մանկութեան պատճառները ուսումնասիրել է գաղիացի ինժեներ A. Ronna իր Les etats unis d'Amerique երկասիրութիւնում, որի վրա ուրիշ անգամ կը խօսենք:

Այս էր ահա սակագնի արդի դրութիւնը արևմտեան Եւրօպայում և Միացեալ-Նահանգներում: Դիմենք այժմ Ռուսաստանի երկաթուղիների սակագնին:

Այստեղ ամեն մէկ երկաթուղու ընկերութեանց կանոնադրութիւններում նշանակած է սակագնի maximum-ը, և նրանց վարչութեանը տուած է սակագնի իջեցնելու արտօնութիւնը, բայց այս կանոնադրութիւններից չէ երևում թէ՝ ճանապարհի կառավարչութիւնը մինչև որ աստիճան կարող է իջեցնել նրան: Ինչպէս բացատրութիւն Անդրկովկասեան, Մօսկվայ-Բրեստ և մէկ ևս, կամ երկու, նոր ընկերութիւնների կանոնադրութիւններում մտցրած է սակագնի minimum-ը ևս: Այս minimum-ի նշանակութիւնը, երևի, այն է որ երկաթուղիքը չը կարողանան անսահման իջեցնել սակագինը և, մեծ վնասներ ստանալով, ծանրաբեռնել պետական գանձարանը, որի մասնակցութեան աստիճանը երկաթուղիների գործին մեր վերջին նամակում ցոյց ենք տուել: Կան մի քանի մթերքներ, որոնց համար կանոնադրութեան սակագինը գիտակցաբար շատ ծանր է նշանակած. այս այն մթերքներն են, որոնց ծաւալումն որքան կարելի է մեծ տարածութիւնում կարի յոյժ բաղձալի է: Սրանց թւումն են՝ հանքային վառելիքները, հողամշակութեան պարարտութիւնները և աղը: Եթէ այս մթերքների սակագինը որոշվեր երկաթուղու բեռնակրութեան ծախսերին համաձայն, այն ժամանակ հարկաւոր չէ մարգարէ լինել դուշակելու համար թէ՝ օրինակ՝ Լոնդկայից մինչև Ուրալի լեռնային գործարանները մի պուդ անդամ քարէ ածուխ չէր գնայ, մինչդեռ այժմ գործ է դրվում այնտեղ այդ ածուխը մեծ քանակութեամբ և երկաթուղու ընկերութիւնը տարեկան 400—500 հազար բուբլ վնաս ունի այդ տեսակ բեռնակրութիւնից... Պետական գանձարանը, որը ապահովել է այդ տեսակ ճանապարհների եկամուտը, տանում է այդ վնասը, ի նկատի ունենալով այդ լեռնային արդիւնաբերութեանց շահերը, այսինքն՝ արժէքաց սկզբունքն, երկաթուղու երախտիքի նկատմամբ, զոհ է բերած արդիւնաբերութեանց շահերին: Ուրիշ խօսքերով այսպէս կարելի է բացատրել մեր միտքը. երկաթուղու երախտիքը, որպէս և այլ խրատներ՝ իրանց թանկագնութեան նկատմամբ, կախում ունեն տնտեսական ընդհանուր օրէնքից՝ պահանջից և առաջարկութիւնից, բայց այդ մթերքների բեռնակրութեան պահանջը և առաջարկութիւնը նպաստաւոր չեն երկաթուղու եկամտից համար, սակայն կարող են օժանդակ լինել երկրի տնտեսական մակերևոյթը բարձրացնելու: Եւ ի հարկէ, երբ կը զարգանայ ժողովրդային տնտեսական կեանքը,—հետևաբար՝ նա պիտի զարգացնէ և երկաթուղու երթևեկութիւնը, որից ընկերութիւնը ժամանակաւ կը սկսի մեծ օգուտներ ունենալ: Եթէ աւելացնենք, որ սակագնի ամեն մի երերումն, որ ընկերութիւնները հարկաւոր են տեսնում գործադրելու, նրանք պարտաւորապէս պիտի վաղօրօք ներկայացնեն ճանապարհային հաղորդակցութեան նախարարութեանը,—մենք վերջացրած կը լինենք սակագնի օրէնսդրութեան կողմը Ռուսաստանում:

Գաս. Նաղուբեան.

նասէրին"... Նրա խօսքերը պահպանողականները ընդհատեցին բացականչելով. „դա իտալացի էր"։ Զախակողմեանները ծափահարում էին։ Բարձրացած աղմուկը և աղաղակները ծածկեցին Ճառախօսի ձայնը։ Միայն մի քանի րօպէից յետոյ նա կարողացաւ շարունակել. „Ես զեղծած կը լինէի իմ ամենասրբազան պարտականութիւնը, եթէ այժմ չը յայտնէի իմ խորին յարգանքը դէպի Գարիբալդի, որ մեր դժբաղդութեան ժամանակ օգնութեան հասաւ մեր հայրենիքին"։—Դրանով նա մեղ վիրաւորեց, բացականչեց պահպանողական պատգամաւորներից մէկը։ Այնուհետև սկսեց խօսել աջակողմեան մի պատգամաւոր, որ առաջարկեց առանց քուէարկութեան մերժել նախկին Ճառախօսի առաջարկութիւնը։ Վերջը պատգամաւորների ժողովը ձայների նշանաւոր մեծամասնութեամբ վճռեց փակել ժողովի նիստը և դրանով յարգել Գարիբալդիի յիշատակը։ Մինիստրութեան անդամները չը կամեցան մասնակցել քուէարկութեանը։

ԻՏԱԼԻԱ

„Հավասի" ընկերութեանը կապերա կղզուց յունիսի 3-ից գրում են հետևեալ մանրամասները Գարիբալդիի վերջին րօպէների մասին։ Մահուանից մի քանի րօպէ առաջ Գարիբալդի մի քանի անդամ հարցրեց՝ արդէօք չէ երևում այն շոգենաւը, որով պէտք է գար բժիշկ Ալբանեզէ։ Նրան տուած բացասական պատասխանը չափազանց վշտացրեց զեներալին։ Այնուհետև նա կանչեց իր մօտ իր Մանլիո որդուն և մի քանի վայրկեանից յետոյ վախճանվեցաւ։ Գարիբալդիի տան դահլիճը սգի սենեակ է դարձրած։ Զեներալը հագած ունի սպիտակ պունչօ, որ սովորաբար հագնում էր կենդանի ժամանակ։ Նրա գլխին ծածկված է Թաւրիշ սև գլխարկ։ Գարիբալդիի դէմքի գծագրութիւնը բոլորովին չէ փոխվել։ Կարելի է մտածել, որ նա կենդանի է։ Դագաղի մօտ կանգնած են պատուաւոր պահապաններ, որոնք կազմված են նաւատիներից մի օֆիցերի հրամանատարութեան տակ։ Դոկտոր Ալբանեզէ հասաւ Կապերա կղզին Գարիբալդիի մահուան միւս օրը, որովհետև շոգենաւը մառախուղի պատճառով ճանապարհին ուշացաւ։

Իտալիան սենատը յունիսի 3-ին վճռեց Գարիբալդիի յիշատակը յարգելու համար դադարեցնել իր պարապմունքները մինչև յունիսի 12-ը և մի պատգամաւորութիւն ուղարկել Կապերա կղզին, որ պէտք է ներկայ գտնվի յուղարկաւորութեան հանդիսին։ Սենատի անդամները երկու ամիս սգի հագուստ կը կրեն։ Ամբողջ սենատը ներկայ կը գտնվի Գարիբալդիի յուղարկաւորութեան հանդիսին, որ կատարվելու է Հռոմի մէջ։ Ներքին գործերի մինիստրի բոլոր առաջարկութիւնները Գարիբալդիին յարգելու մասին միաձայն ընդունվեցան։

Իր կտակի մէջ, որ գրված է 1881 թուականի սեպտեմբերի 17-ին, Գարիբալդի յանձնում է իր ամուսին Ֆրանչեսկային այրել իր մարմինը և պարտաւորվում է իր կողմից էլ այրել կնոջ մարմինը, եթէ նա իրանից առաջ վախճանվեր։ Երկու ամուսինների փոշին կը պահվի Նրանց երկու որդիներանց գերեզմանների մօտ։ Յունիսի 4-ին Հռոմի մէջ հրատարակվող բոլոր լրագիրները դուրս եկան սգի շրջանակներով և պարունակում էին Գարիբալդիի կենսագրութիւնը և նրա գովասանքները։ Ֆրանսիական պատգամաւորների ժողովի վճիռը Գարիբալդիին յարգելու համար Իտալիայի մէջ շատ լաւ տպաւորութիւն գործեց։ Գարիբալդիի յուղարկաւորութեան հանդիսի օրը պաշտօնապէս դեռ չէ նշանակված։ Հումբերտ թագաւորի, իտալական կառավարութեան, սենատի, իտալական պարլամենտի և Հռոմի ներկայացուցիչները յունիսի 6-ին պատրաստվում էին ուղևորվել Կապրերա։ Հռոմի քաղաքագլուխը թոյլատրութիւն է խնդրում Գարիբալդիի սուրը Կապիտոլի մէջ պահելու մասին։

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Դավրէժ, 18 մայիսի

Ինչպէս որ այս տարուայ ձմեռն իր սառնապատ երկարատևութեամբ մի անախորժ տպաւորութիւն թողեց, գարունն էլ նրանից յետ չը մընաց իր յորդահեղեղ անձրևներով։ Համարեա թէ ամբողջ ապրիլ ամիսը մթնոտած էր, ամպը գոռում էր և անձրևը թափվում, և որ աւելի ճանձրալին էր, ապրիլի 14-ին մի չատ ծանր ձիւն եկաւ։ Դրանից յետոյ հորիզոնն աւելի խիտ ամպերով ծածկվեցաւ. փոթորիկ, ամպրոպ, որոտում և կայծակ սովորական բաներ էին դարձել։ Մարդիկ անցեալ հոկտեմբերի սկզբից մինչև ապրիլի վերջը ենթարկված լինելով սառնութեան և խոնաւութեան, դրեթէ յուսահատված երբեմն օրհնում էին, երբեմն անիծում և երբեմն էլ ախ ու վախ քաշելով աղօթքներ անում, թէ երբ կը լինի որ մի գարնան գեղաղուարթ օր տեսնենք։ Բայց ոչինչ չէր օգնում. երկինքը կարծես աւելի էր սաստկացնում իր սպառնալիքները, տեղատարափ անձրևի չիթերը կախված էին մնում երկնքից օր ու գիշեր. եթէ որ անձրևը դադարում էր, այն ժամանակ տեսնվում էին հազար ու բիւր ամպոց կտորտանքներ, որոնք առանց թոյլ տալու՝ որ արեգակն իր զէմքը գոնէ մի րոպէ ցոյց տայ, արշաւում էին օդի ովկիանոսում արևելքից արևմուտք, հարաւից հիւսիս և դրանց հակառակը։ Այդ անախորժ դէպքում մարդս ակամայ հասնում էր այն եզրակացութեան, թէ բնութեան մէջ մի բան պէտք է խանգարված կամ քայքայված լինի, որ աւելի է տալիս այդպիսի մեծ բացասութեան։ Եւ ճշմարիտ մարդս որքան էլ ուզենայ իրան հեռու պահել բնական երևոյթների վրա գուշակութիւններ և երկար ու բարակ փիլիսոփայութիւններ անելուց, ընդհակառակը շատ աւելի ճառախօսութիւններ կանէ, որովհետև դրանք մեծ ազդեցութիւն ունեն մարդուս սրտի վրա։ Մայիսի 5-ին պատահեցաւ արեգակի մասնական խաւարումը, (բայց մեծամասնական). տիեզերքի այդ ամենակարևոր և ամենալուսատու մարմինը մի քանի ժամ խաւարման վտանգին ենթարկվելով, կարծես պէտք է մասամբ հաստատէր այն ժողովրդական գուշակութիւնը «թէ բընութեան մէջ մի բան խանգարված է»։ Եւ զարմանալին այն է, որ համարեա թէ այդ խաւարմունքով բոլոր բացասական փոթորիկները դադարեցին։ Բայց մի այլ զարմանալի կէտ էլ կայ, որ մեր էջմիածինը ինչպէս ուրիշ շատ դէպքերում, այնպէս էլ խաւարման դէպքում իր Օրացոյցի մէջ անհոգ և լուռ մնաց։!!

Եւ արդէն մի քանի անդամ հաղորդած եմ որ Սովուքբուլաղի շրջականերում երևում են ժանտախտի պէս հիւանդութիւններ։ Թէև հաստատ չէ իմացվում, որ դրանք մարդահաղած ժանտախտ տեսակից լինէին իսկապէս, բայց բնութեամբ դրան նմանվող մի զարշելի հիւանդութիւն այդ կողմերում կայ ու կայ, որ զանազան ժամանակներում երևում է ու անյայտանում։ Ժանտախտի հայրենիքը Աֆրիկան կամ Եգիպտոսն է եղել, այդ տեղից նա անցել է, ինչպէս երևում է Արաբիա և յետոյ Միջագետք, որտեղից էլ հաւանական է Քիւրդստանին մօտեցած լինի։ Վերջին անդամ Սովուքբուլաղի Ուչունդերէ գիւղում պատահածը սկսում էր մի թարախալից մեծ ուռոյցքով, որ գոյանում էր մի քանի ժամուան մէջ, մարդի կաղմուածքի առհասարակ վերին մասերում և հիւանդին երկու օրվայ մէջ մեռցնում էր։ Այդ գիւղի մարդիքը սարսափելով ցրվեցին ու փախան, իսկ Ուչունդերէ գիւղը կառավարութեան հրամանով այրվեցաւ։ Այս օրերս Թէհրանի Ֆրանսիական դեսպանատան բժիշկ դոկտոր Անսոն եկաւ մեր քաղաքը, որպէս զի գնայ Սովուքբուլաղ և այդ զարհուրելի հիւանդութեան հետքերը որքան կարելի է քննել։ Բայց ուր է մարդասէր Եւրոպան այս դէպքում, ինչու արդեօք իր փրկարար ձեռքը չէ երկարացնում դէպի այս հիւանդութեան ճարակած տեղերը և մարդկային սեռն ազատում այդ ահարկու թշնամուց, որ ապագայում կարող է մեծ վտանգ սպառնալ։

Թաւրիզից ոչ այնքան հեռի հայաբնակ, Մուժամբար գիւղում պատահել է մի արտաքոյ կարգի չարագործութիւն՝ մի հարսի և սկեսուրի մէջ։ Սկեսուրը չը սիրելով իր հարսին, միշտ մի առիթ է փնտռում եղել, որ իր հարսին մի լաւ պատժէ, որովհետև տեսել է որ պարզ ատելութեամբ իր սիրը չէ կարող հանել։ Մի օր սկեսուրն իրանց այծերի՝ գիւղի մէջ այս և այն կողմը տանելը պատճառ բռնելով, թէ ինչու տարար կամ թէ ինչու բերիր և այլն, իրանց տան մէջ յարձակվում է հարսի վրա և իր ձեռքերը նրա բօղազին դնելով կամենում է խեղդել, բայց երբ հարսը ձեռքով իրան պաշտպանում է և սկեսուրին էլ նախատում է իր խեղդելու մասին, այն ժամանակ կատաղի սկեսուրը կրկին յարձակվելով աւելի բարբարոս կերպով է կամենում պատժել նրան։ Հարսին վեր գցելով, նրա մի ոտքը դնում է իր երկու ոտքերի տակ, երկու ձեռքով էլ նրա միւս ոտն է բռնում և այնպիսի ուժով վեր բարձրացնելով ցնցում է, որ նրան իսկոյն ճզելով երկու կտոր անէ։ Հարսն այդ բոպէին ուշաթափ է լինում և ներքնապէս սաստիկ վնասվում։ Դժբաղդ հարսի ազգականները նորան բերում են Թաւրիզ, որպէս զի բժշկել տան, բայց ճարը չեն գտնում, և հարսը մեռնում է։ Այժմ այդ գործը հասել է դատարանի և Թէհրանից արդէն հրաման եկաւ, որ գազանարարոյ սկեսուրին պատժեն՝ հայոց հոգևոր կառավարութեան օրէնքի համաձայն։ Ցեղնողները պատմում են որ այդ գեղջկուհին մի հսկայամարմին կին է։

Հայաղզի Միրզա Մելքում խանը չուտով կը վերադառնայ Եւրոպա պարսկական լիազօր և առաջին դեսպանի պաշտօնով ի Լօնդոն։ Բացի այդ պաշտօնը Վեհափառ շահը նրան յանձնել է և Գերմանիայի դեսպանութիւնը (պրուսիական արքունիքում ի Բերլին)։ Նորին վսեմութիւնն այդ երկու դիպլոմատիական ծանր պաշտօնների համար ռոճիկ կը ստանայ պարսկական կառավարութիւնից 50 հազար բուբլուց աւելի։ Նորա այժմեան տիտղոսն է Նիզամըդ Դովլէ փոխանակ Նազըմըլ Մուլքի։ Իշխանուհի Մելքում խանին չը նորհված է արեգական կարգի (Ordre du soleil) մեծ պատուանշանը։ Այդ չքանշանի կարգը նոր է հաստատվել պարսից արքունիքում։ Մելքում խանը կը տանէ իր հետ մի մեծ պատուանշան հոլանդացոց թագաւորին մատուցանելու պարսից թագաւորի կողմից։

Նորին բարձրութիւն՝ թագաժառանգ իշխանը, որ գնացել էր Թէհրան, իր վեհափառ հօր տեսութեան՝ կրկին վերադարձաւ Թաւրիզ։ Իսկ Էմիր Նիզամը որ նորա երկրորդականն է, պէտք է գընայ Սալմասա՝ թիւրքաց սահմանի մօտ եղած պարոկական բանակին նայելու, որ հսկելու պաշտօն ունի այդ կողմերում։ Կասկածանքներ կան, որպէս թէ Շեյխ Իբադուլլահը իր աքսորանքից ազատվելով եկած լինի նորից իր տեղը՝ նոր ապստամբութիւններ յարուցանելու համար։

Պարսկաստանի առաջնորդ Գրիգորիս եպիսկոպոսն Ասպահանից՝ մօտերս եկել է Թէհրան ազգային գործերի համար։ Լսում ենք, որ այդ վիճակի ժողովուրդը նրա գործունէութիւնից գոհ է, որովհետև նա ոչնչից խորհուրդ չէ լսում և վարժարանների համար էլ այն հարկաւոր հոգացողութիւնները չէ անում, ինչ որ անվում է այսօր նոր և հրահանգիչ մանկավարժութեամբ՝ քիչ թէ շատ կարգաւորեալ դպրոցներում։ Նա Ասպահանի հայոց դպրոցները թողել է նախկին տիրացուական դրութեան մէջ, գրում է թղթակիցս, աշակերտները նստած են խառնիխուռն, և նրանցից իւրաքանչիւրը կարդում է սաղմոս, Նարեկ, Շարական, Ծննդոց Գիրք, Յայսմաւուրք, Երաղահան, Պղնձէքաղաք և այլ այսպիսի գրքեր բոլորն էլ աշակերտաց անհասկանալի և անմարսելի գրաբար լեզուով։ Երբ որ ժողովուրդը նոր ուսուցիչների համար խօսք է բաց անում, նա պատասխանում է, թէ ինքն արդէն գրել է Մուշ, Սղերդ և Մարաստան, որ այդ քաղաքներում գտնվող անուանի տիրացու հոսհոս վարժապետներից մի քանիսը չուտով ճանապարհ ընկնեն դէպի Նոր Զուղա, և այնտեղի վարժարանների հայկաբանութեան, խրթնաբանութեան, ճոռոմաբանութեան և զէվզէկութեան դասերը ձեռք առնեն, որպէս ազգային հերոս-խրմբրլներ։ Բացի սրանցից, մի քանի ականատես ճանապարհորդներ, որոնք գալիս էին Թէհրանից և Ասպահանից, մեղ պատմեցին թէ այդ եպիսկոպոսը այնքան փառասէր է, որ եկեղեցում պատարագի ժամանակ երբ յիշատակութիւն է լինում Վեհափառ կաթողիկոսի անուան և յետոյ իրան, պատուիրել է այսուհետև իր անունն յիշեն որպէս Գրիգորիս քահանայապետ, փոխանակ մի պարզ առաջնորդի կամ եպիսկոպոսի։ Նոյն ճանապարհորդները աւելացրին թէ եպիսկոպոսը պանդուխտ հայերի և օտարազգիների առաջ պարծենում է միայն եկեղեցական զարդերով, արծաթ-ոսկեղէններով և պատկերներով, փոխանակ կրթեալ ժողովուրդ և բարեկարգ դպրոցներ ունենալու։ Եթէ մէկը հարուստ կամ համբաւոր չէ, եպիսկոպոսը իրաւունք չէ տալիս նստելու իր մօտ։

Արմենակ

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Գայլերը Ֆրանսիայում 1870 թւի պատերազմից յետոյ այն աստիճան բազմացան, որ Ֆրանսիական կառավարութիւնը հարկաւոր համարեց գայլերին ոչնչացնելու համար մէկ օրինագիծ առաջարկել, որով պրէմիաներ տալու նախկին սիստեմային վերադարձաւ։ Դրանից յետոյ գայլի և մատակ գայլի իւրաքանչիւր գլխի համար 100 ֆրանկ կը վճարեն. մատաղահաս գայլի համար 40 ֆրանկ, իր կատաղութեամբ յայտնի գայլի համար 200 ֆր. կը վճարեն։ Արևելեան և հարաւային դեպարտամենտներում գայլերի բազմանալը վերագրում են 1870 թւի արշաւանքին, որի ժամանակ բոլորովին արգելվեցաւ գայլեր որսալ, այնպէս որ գայլերը ոչ միայն կարող էին անարգել կերպով բազմանալ, այլ և մեծ թիւով եկան սահմանի մօտ գտնված լեռնային շրջաններից զօրքերով գրաված տեղերը։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 յունիսի։ „Правит. Вѣстн." լրագիրը հաղորդում է. Ներքին գործերի մինիստրը դադարեցրեց „Минута" լրագրի հրատարակութիւնը յունիսի 3-ից երեք ամսով։ Պրոֆէսօր Պախման սենատոր է նշանակված։ Ֆինանսների մինիստրութեան տեղեկացոյցը հաղորդում է, որ նա իւրաքանչիւր ամիս կը հրատարակէ տեղեկութիւններ պետական եկամուտների մասին։ „Голосъ" լրագրին հաղորդում են. Մոսկվայի զեմստվոյի խնդիրքը ուպրավանների ներկայացուցիչների ուսումնարանական խորհուրդների անդամ դարձնելու մասին մերժված է։ Օգոստոսի 18-ին ենթագրված է Օդէսսայի մէջ բնագէտների և բժիշկների ժողով։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 5 յունիսի։ „Правит. Вѣстн." լրագիրը հրատարակել է բարձրագոյն հրաման, որ Անդրկովկասեան երկաթուղու Բաղուի նաւթային և բաթումի բաժինների կառուցման համար տրվեն անհրաժեշտ հողերը և ուրիշ կայքերը։ Գեներալ-մայոր Վյանդալի նշանակված է արտաքին գործերի մինիստրի օգնական, ստանալով տայնի սօվետնիկի աստիճան։ „Правит. Вѣстн." լրագիրը հերքում է լրագիրների հաղորդած լուրերը, իբր թէ ենթադրված է Ղրիմի մէջ հողային բաժիններ ընծայել հարաւային—սլավեան գաղթականներին, որոնք առանձին ծառայութիւններ են մատուցել Ռուսաստանին։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 յունիսի։ „Правит. Вѣстн." լրագիրը հաղորդում է. ոչ քրիստոնեաներին արգելված է առևտուր անել քրիստոնեաների երկրպագութեան առարկաներով։ „Голосъ" հաղորդում է. Մոսկվայի դատաստանական պալատի պրօկուրորը արդարութեան մինիստրին առաջարկութիւն ուղարկեց՝ կատկովին դատաստանի ենթարկել մի յանցանքի համար, որ նախատեսված է 1040 յօդուածի մէջ։

Կ. ՊՕԼԻՍ, 6 յունիսի։ Դերվիշ-փաշայի տեղ Եգիպտոս ուղարկված է զազի Մուխտար։

ԼՕՆԴՕՆ, 6 յունիսի։ Ասում են, որ Թիւրքիան կամենում է զօրքեր ուղարկել Եգիպտոս անգլիական բեռնակիր նաւերով։ Զօր-

քերի ուղարկելու նպատակն է վերականգնել խեդիվի հեղինակութիւնը: Եգիպտական զորքերը կարձակվեն: Անգլիական նաւատորմը իր վրա է առնում Սուէզի ջրանցքի պահպանութիւնը:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 յունիսի: Պետական բանկի 5% տոմակը առաջին շրջանի արժէ 94 ր. 87 կ., երկրորդ 90 ր. 50½ կ., երրորդ 90 ր. 50½ կ., չորրորդ 90 ր. 50 կ., հինգերորդ 90 ր. 13 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմակը արժէ 216 ր. 17 կ., երկրորդ 210 ր. 50 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմակը արժէ 89 ր. 37½ կ., երկրորդ 89 ր. 35 կ., երրորդ 89 ր. 37 կ., ոսկի 8 ր. 10 կ.: Ռուսաց 1 ր. Լոնդոնի վրա արժէ 24,35 պէնս, Ամստերդամի վրա արժէ 123 ր. 12 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 207 մարկ 75 կ., Փարիզի վրա արժէ 256 ֆրանկ: Բորսայի տրամադրութիւնը ամուր է:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Երևանցի Արշակ Մովսէսեան Սարգիսեանց ցաւօք սրտիւ ինդրում է իւր բարեկամներին և ծանօթներին շնորհ բերել Նորաշէն եկեղեցին այսօր առաւօտեան 9 ժամին յուղարկաւորութիւն իւր եղբայր Սմբատ Սարգիսեանցին, որի մարմինը պէտք է տանի Հավլաբարի հանգստարանը: 1—1

ИЗЪ ЦЕНТРАЛЬНОЙ БИБЛІОТЕКИ
ВЪ
ГАЛЛЕРЕѢ АРЦРУНИ

Взято пальто съ документами въ памятной книжкѣ. Документы эти слѣдующіе: отпускной билетъ изъ Императ. Москов. Техническаго училища и свидѣтельство для проѣзда по уменьшенному тарифу по желѣзнымъ дорогамъ. Имя студента-техника Аркадій Бабовъ. Убѣдительно прошу взявшаго пальто или нашедшаго эти документы возвратить въ Центральную Библіотеку.

ընդունում են ՇՈՐԵՐԻ ձևելը, կարելը 3 մինչև 6 ր. վճարով: Քարօնակայա փողոց, կարասիքների խանութների մօտ: 3—3

ՄԵԾ ՎԱՃԱՌՈՒՄՆ
ՄԻՆՉԵՒ ԱՄՍՎԱՅ ՎԵՐՋԸ

ՄԱՏԻՏՆԵՐ 8 կ. գիւժինը, ԾՐԱՐՆԵՐ 3 կ. հարիւրը, սապօն 3 կ. հատը, արևի ԺԱՄԱՑՈՑՑՆԵՐ 50 կ., ՇԼՊԱՆՆԵՐ (նոր ոսկուց) ժամացոյցի համար 50 կ., կրաններ 10 կ., ջրի ամաններ 30 կ., կժեր 25 կ., կախարաններ 4 կ., ՖԻԼՏՐԱՆԵՐ 3 ր., ԾԸԾիչներ 1 ր., հայելիներ 35 կ., վարտիքներ 4 ր., պիջակներ 6 ր., ԱՄԲՈՂՋ ՀԱԳՈՒՍՏ 13 ր., գլխարկներ 1 ր., ՀԸ ԹՐՋՎՈՂ վերարկուներ 6 ր., շչէօակա 90 կ., ԱՍԵՂՆԵՐ 100 հատը 8 կ., կանանց և տղամարդկանց ԳՈՒԼԲԱՆԵՐ 2 ր. 50 կ. գիւժինը, ՄԵՂՐԱՄՈՄ 32 կ. անգլիական ֆունտը, կանֆետներ 40 կ. ֆունտը, ԴՐԱՊ, տրիկօ, ԱԼԲՈՄՆԵՐ, բրիտանական մետալի առարկաներ և այլն ԿԻՍԱԴՆՈՎ, մոմեր, մուրաբա և այլն շատ էժան:

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ
ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԵՑ:
44—50

КЁЛЕРСКАЯ
УКСУСНАЯ ЭССЕНЦІЯ.
6—50

ԻՐԱՒԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ, Գոլովինսկի պրոսպեկտի վրա, տուն Ճարտարապետ Բէլօի: Գրասենեակը բաց է առաւօտեան 9 ժամից մինչև 3 ժամը կէս օրից յետոյ և երեկոյեան 7—10 ժամը ամենայն օր, բացի կիրակի օրերից և մեծ տօներից:

ԿՕԼԽԻԴԱ
Ներկայ 1882 թ. յունիսի 1-ից ՓՕԹԻՈՒՄ Միխայլովսկայա կլոր փողոցի վրա, բուլվարի յանդէպ Խումարաձէի տան վերին հարկում ԱԼՖՕՆՍ ԺԱԿՕԻ այրված հիւրանոցի նախկին պահողը բաց է անում ՀԻՒՐԱՆՈՑ ամեն տեսակ յարմարութիւններով ինչպէս բարձրաստիճան անձանց համար, նոյնպէս և միջին դասերի հասարակութեան համար: Մաքրութեան համար բոլոր միջոցները կը գործադրվեն: Ցոյս ունեմ, որ ինչպէս առաջ, նոյնպէս և այժմ յարգելի հասարակութիւնը ինձ անուշադիր չի թողնի: Անտոն ԱԽՕԲԱՋԷ:
6—6 (1)

УЧИЛИЩЕ
СЪ
ПРОГИМНАЗИЧЕСКИМЪ КУРСОМЪ
МИРИМАНОВА.
(Вельяминовская ул. д. Аматуни).

На лѣтнее время открываются РЕПЕТИЦІОННЫЕ КЛАССЫ для желающихъ поступить въ гимназіи и имѣющихъ ПЕРЕЭКЗАМЕНОВКИ послѣ вакацій. Преподователями приглашены учителя среднихъ учебныхъ заведеній. Занятія начинаются съ 7-го іюня. 2—4

ԵՐՕՊԱԿԱՆ ԱՊՐԱՆՔԵՐԻ ՊԱՀԵՍՏՈՒՄ
ВЪ СКЛАДѢ ЕВРОПЕЙСКИХЪ ТОВАРОВЪ
Արծրունու գալլէրէում № 144 ԹԱԽՎՈՒՄՈՎ վերսկսած ՊՕՄՈՒՄՈՎ մեծ տեսակ ՄԵՆՔԼԻ, նոյնպէս ՀԱՑԵԼԻՆԵՐԸ և ՇՐՋԱՆԵՐԸ.
Ծօնէս Ֆաբրիկայի ամեն տեսակ մետաղեղէն իրերով վերոյիշեալ ապրանքներ մեծ քանակութեամբ մշտապէս գտնվում են ՄԻՔԱՅԷԼ ՏԷՐ ՆԻԿՈՂՈՍԵԱՆՑԻ պահեստում (въ складѣ) միջի փողոցում կաթոլիկաց փողոցի անկիւնում № 13.
Տարաբաղաքացիք կարող են դիմել հեռևեալ հասցէով. Тифлисъ Михаилу Н. Теръ-Никогосову.
55—60

Въ Редакціи газеты
«МШАКЪ»
Продается
БРОШЮРА
„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“
Д. Григорія АРЦРУНИ.
Брошюра напечатана въ Москвѣ.
Цѣна 25 коп.

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
ԺՕՐԺ ՍԱՆ'Ի
„ՎԱՐԴԱԳՈՅՆ ԱՄԲ“
Մանկական վէպը.
Ծախվում է 'ի Նպաստ մի էջաւոր աշակերտի: Կենտրոնական և կովկասեան գրախանութներում:
ԳԻՆՆ է 25 կ.:

ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒՀԻ
ՕՐԻՈՐԴ ԽԻԶԱՆԵԱՆՑ
ՍՕԼՕԼԱԿՈՒՄ, Միրզոեվների տուն, Քաղաքային Վարչութեան հանդէպ:
Ցանկացողները կարող են դիմել նրան ԱՄԵՆ ՕՐ, ժամը 2-ից, մինչև 5 ժամ երեկոյեան:
8—10

JOURNAL D'ORIENT
HEBDOMADAIRE
Paraissant a VIENNE (Autriche)
ABONNEMENTS: 1 an. . . 8 roubles
6 mois. . . 4 —
S'adresser à F. Salles, avocat
1. Weihburggasse 9. (Vienne)
Sans ajouter le titre du journal.

Միջի փողոց, կաթոլիկեսկայա փողոցի անկիւն № 13.

Աւելի էժան, քան թէ ուրիշ տեղ ծախվում են. ՎԻԵՆՆԱՑԻ ՄԵԲԵԼ ամենայն տեսակ, ֆրանսիական և անգլիական երկաթէ ԿՐԱՎԱԹՆԵՐ 8—30 ր., չամդաններ 250—25 ր., սակվոյաժներ 1. 30—12 ր., սուենդուկներ ճանապարհի 6—35 ր., մարաններ (погребцы) 6—25 ր., սամովարներ 60 կ.—1.25 ֆունտը., կուխոնների պղնձէ ամաններ, գերմանիայի երկաթէ էմալով ամաններ. ուտիվալնիկներ մրամորների 38 ր.—75 ր., հրացաններ երկու լուլանի 6—32 ր., ռէվոլվէրներ ամենայն տեսակ 3. 50—30 ր., պատրոններ. (գուլաններ) ըէվոլվէրի, սիգար Ռէնգարդի ֆաբրիկից. պապիրոս և թամբաքու կուշնարօվի գիլզի պապիրոզի. 5,000 ՖՈՒՆՏ ԹԷՅ (չայ) ԵՎ. ՊԱՊՈՎՆԵՐԻ, բիսկվիտ. (սուխար չայու և կաֆէի) էլինէմի. կոֆէ էլինէմի և Միխէլսոնի. Պետերբուրգու 40—1 ր. 25 կ. հայելիներ ամենայն տեսակ 28 կ.—240 ր., պրոբկայ գինէվաճառների, հանքային և գարէջրի (для зельтерскихъ водъ и пива) ղուլթուկ (пухъ), պաղնոներ սամովարի և չայու, դանակ չանդալ զանազան ֆաբրիկաների 1 ր. 20 կ.—25 ր. դուժինը. գրչակոթներ 1 ր. 80 կ.—5—60 կ. դանակ ջիբի 1—60 կ.—12 ր., դանակ հացի 20 կ.—1 ր., հատը, կուխոնների 1—40 մինչև 3—20 կ. պրիբոր. միս կարելու մաշինայ. Անգլիական ութոներ, բրիտանկի չայնիկներ, կաֆէինիկներ ամենայն տեսակ, Ջաղացներ կաֆէի համար, ֆիլտեր—ջուր մաքրելու, կրախմալ կարօրկէն 18 կ., վաքս ֆրանսիայի ժակոյ, թուղթ փոշտի, կանվերտներ, սուրգուչ, մատիտ, գրիչ երկաթէ, գրչակոթ, քարետախտակ, թանաք, թանաքամաններ, պրեսպապիեներ, դդմներ սեղանի և չայու ֆրաժէ, վարշավի և բրիտանկի դուժինը 1—50 կ. մինչև 12 ր., և չայու 45 կ.—5 ր., չուտիչկէք 45 կ.—5 ր., շամդաններ ամեն տեսակ 25 կ.—12 ր. ջուխտ, պղսապոշկաններ Վարշավու, ՌԵԶԻՆԻ ԿԱԼՕՇՆԵՐ, ամեն տեսակ, գուլբաններ կանանց և մարդկերանց 15 կ.—50 կ. ջուխտ, շապիկներ, մարդկերանց գալուստիկներ, զոնտիկներ 35 կ.—4—50 կ., հատ, անձրևի և շոքի. սանդրեր շիրմայու ոսկորէ, գուտապերչովի և փայտէ, շչոտկաներ գլխի, շորի, սապոկի, պոլի և կարտի համար. չուլքի թէլ (бумага) մատոկի կօճի և շալէ (гарусь) ֆէլչատկէք մարդկերանց և կանանց, պորտմաններ, քիսաներ, պապիրոսի ամաններ և մանր գոլանտերէյնի ապրանքներ, սապոն ամեն տեսակ 3 կ.,—30 կ., կտոր, հոտավէտ ջրեր, պուդրա, գլիցերին ջրի քացախ, հոտավէտ պարաշոկներ ԿԻԼԵՐԻ ԼԱԲՕՐԱՏՈՐԻՑ. և այլն և այլն և այլն:

Վաճառականներին առանձին պայմաններով և զիջումով վերոյիշեալ ապրանքներ մեծ քանակութեամբ մշտապէս գտնվում են ՄԻՔԱՅԷԼ ՏԷՐ ՆԻԿՈՂՈՍԵԱՆՑԻ պահեստում (въ складѣ) միջի փողոցում կաթոլիկաց փողոցի անկիւնում № 13.

Տարաբաղաքացիք կարող են դիմել հեռևեալ հասցէով. Тифлисъ Михаилу Н. Теръ-Никогосову.
66—180

Միջի փողոց, կաթոլիկեսկայա փողոցի անկիւն № 13.

Дозволено цензурою, Тифлисъ, 7 Іюня 1882 года. Типогр. Главн. Упр. Главнонач. гражд. час. Лор.-Мелик. ул., каз. д.